ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հուլիսի 2019 թվականի N 407-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի Զովք գյուղի բնակիչ Մանվել Պարգևի Ներսիսյանի դիմումը, որով խնդրել է վերականգնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Զովք գյուղի 10-րդ փողոցի 1-ին նրբանցքի վրա գտնվող նավես-պահեստի սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքի հիմքերը:

Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Զովք գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 12 որոշմամբ Ջրվեժ համայնքի Զովք գյուղի բնակիչ Մանվել Պարգևի Ներսիսյանին է սեփականաշնորհվել Զովք գյուղի 10-րդ փողոցի 1-ին նրբանցքի վրա գտնվող 716,28 քառ.մետր մակերեսով նավես-պահեստի շենքը: Շենքի սպասարկման համար փաստացի օգտագործվող տարածքը կազմում է 2395,6 քառ.մետր:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8, 16 և 118-րդ հոդվածի 6-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30 և 48-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 28-ի թիվ 38-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Զովք գյուղի վարչական տարածքում գտնվող Մանվել Պարգևի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող 716,28 քառ.մետր մակերեսով պահեստի սպասարկման նպատակով փաստացի օգտագործվող 2395,6 քառ.մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողակտորի օգտագործմաան հիմքերը համարել վերականգնված և նշված հողակտորին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, 10-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 2:

2. Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 10-րդ փողոցի 1-ին նրբանցք, թիվ 2 հասցեի՝ 2395,6 քառ.մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողակտորի օգտագործման հիմքերը կհամարվի վերականգնված՝ Մանվել Պարգևի Ներսիսյանի կողմից հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքն ամբողջությամբ վճարելուց հետո, որը կազմում է 1 264 877 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար ութ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հուլիսի 2019 թվականի N 408-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Վանիկ Սիմոնի Հակոբյանին տալ երկհարկանի բնակելի տան և ծածկարան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 35-րդ փողոցի թիվ 20/1 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Վանիկ Սիմոնի Հակոբյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հուլիսի 2019 թվականի N 409-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Դավիթ Գրիգորի Դանոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 22-րդ փողոցի թիվ 22 հասցեի տնամերձ հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01082017-07-0004 վկայականում նշված թիվ 1 բնակելի տունը՝ 234.4 քառ.մետր մակերեսով:

2. Քաղաքացի Դավիթ Գրիգորի Դանոյանին տալ մեկ հարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 22-րդ փողոցի թիվ 22 հասցեի տնամերձ հողամասում:

3. Պարտավորեցնել Դավիթ Գրիգորի Դանոյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հուլիսի 2019 թվականի N 410-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գոհարիկ Արշակի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 39-րդ փողոցի թիվ 17 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան վերակառուցման և օժանդակ շինության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հուլիսի 2019 թվականի N 411-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արմինե Ալեքսանդրի Գազարյանին տալ բնակելի տան վերակառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 9-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Արմինե Ալեքսանդրի Գազարյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հուլիսի 2019 թվականի N 412-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ստեփան Սուրենի Սարգսյանին և Գայանե Արտուշի Աֆյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 45-րդ փողոցի թիվ 80 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան, լողավազանի, օժանդակ շինությունների կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«8» հուլիսի 2019 թվականի N 413-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Հովհաննես և Վահե Պողոսյաններին, Գոհար Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական տարածքի 5-րդ թաղամասի թիվ 34 հասցեի այգեգործական հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ այգետնակի վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 8
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» հուլիսի 2019 թվականի N 414-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Ռուդիկ Վաղարշակի Սևումյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 16 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ իրականացնում է շինարարական աշխատանքներ և կառուցում բնակելի տուն, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ռուդիկ Վաղարշակի Սևումյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Ռուդիկ Վաղարշակի Սևումյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228101 հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» հուլիսի 2019 թվականի N 415-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Վիկտոր Ալեքսանդրի Կիրակոսյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Վիկտոր Ալեքսանդրի Կիրակոսյանի ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 2-րդ այգեգործական տարածքի 28-րդ թաղամասի թիվ 46 և թիվ 47 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 2-րդ այգեգործական տարածք, 28-րդ թաղամաս, թիվ 46,47:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» հուլիսի 2019 թվականի N 416-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 354-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 13-ի «Շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 354-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետում «մանսարդային» բառը փոխարինել «նկուղային» բառով:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» հուլիսի 2019 թվականի N 417-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ավագ Համազասպի Ավագյանի (ծնված 1949 թվականի հուլիսի 25-ին) դիմումը՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 24/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի հասարակական կառուցապատման 990,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ 91,62 քառ.մետր, թիվ 2 օժանդակ շինությունը՝ 8,7 քառ.մետր, թիվ 3 հարթակը՝ 12,6 քառ.մետր, թիվ 4, 5 պարիսպները՝ 10,33 քառ.մետր մակերեսներով՝ իրեն օտարելու մասին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 31052019-07-0077, տրված 2019 թվականի մայիսի 31-ին, անհատ ձեռնարկատեր Վալերի Գալստյանի կողմից 2019 թվականի մայիսի 10-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 և 35.1-րդ կետերով, ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 24/1 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման 990,0 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված թիվ 1 բնակելի տունը՝ 91,62 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 113,44 քառ.մետր), թիվ 2 օժանդակ շինությունը՝ 8,7 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 10,82 քառ.մետր), թիվ 3 հարթակը՝ 12,6 քառ.մետր, թիվ 4, 5 պարիսպները՝ 10,33 քառ.մետր մակերեսներով, օտարել կառույցն իրականացրած Ավագ Համազասպի Ավագյանին:

2. Պարտավորեցնել Ավագ Համազասպի Ավագյանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 4 478 760 (չորս միլիոն չորս հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր վաթսուն), շինությունների վաճառքի արժեքը՝ 1 093 092 (մեկ միլիոն իննսուներեք հազար իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի օտարման պայմանագիր:

4. Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9 հուլիսի 2019 թվականի N 418-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. 1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արուսյակ Ասատուրի Ազիզյանին, Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 50 հասցեում 2019 թվականի հուլիսի 9-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» հուլիսի 2019 թվականի N 419-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Էդիկ Արամայիսի Վարդանյանին և Արմինե Մելսիկի Անինյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 38-րդ փողոցի թիվ 38 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկու հատ բնակելի տների, ավտոտնակների կառուցման և տարածքի պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» հուլիսի 2019 թվականի N 420-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արամ Աշոտի Գրիգորյանին տալ ամառանոցի և ամառային խոհանոցի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 20-րդ թաղամասի թիվ 24 հասցեի այգեգործական հողամասում:

2.Պարտավորեցնել Արամ Աշոտի Գրիգորյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հուլիսի 2019 թվականի N 421-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Խաչատուր Սերգեյի Էլոյանը սեփականության իրավունքով ընտանիքին հատկացված Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 7-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 5 տնամերձ հողակտորում ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքներ և կառուցել բնակելի տուն ու կիսանկուղ, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Խաչատուր Սերգեյի Էլոյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Խաչատուր Սերգեյի Էլոյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105214101 հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հուլիսի 2019 թվականի N 422-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Խաչատուր Սերգեյի Էլոյանի (ծնված՝ 1980 թվականի նոյեմբերի 8-ին), Սերգեյ Խաչատուրի Էլոյանի (ծնված՝ 1952 թվականի հունվարի 1-ին), Հայաստան Համայակի Էլոյանի (ծնված՝ 1958 թվականի հունվարի 2-ին), Արմինե Սերգեյի Էլոյանի (ծնված՝ 1978 թվականի սեպտեմբերի 27-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրենց հատկացված Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 7-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 5 հասցեի հողակտորում (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի հունիսի 6-ին տրված թիվ ԱԲ-1330 արխիվային տեղեկանքը, անհատ ձեռնարկատեր Էդվարդ Միլիտոսյանի կողմից 2019 թվականի հունիսի 24-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված կիսանկուղով բնակելի տունը և ինքնակամ զբաղեցրած հողամասը:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Էդվարդ Միլիտոսյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Խաչատուր, Սերգեյ, Հայաստան և Արմինե Էլոյանները սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 7-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 5 հասցեի 1250,0 քառ.մետր մակերեսով հողակտորում 2019 թվականին ինքնակամ կառուցել են կիսանկուղով բնակելի տուն 259,78 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով և նրանց կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 1686,0 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 1250,0 քառ.մետր մակերեսի փոխարեն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Խաչատուր, Սերգեյ, Հայաստան և Արմինե Էլոյանների կողմից փաստացի ավել օգտագործվող հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, ինչպես նաև Խաչատուր, Սերգեյ, Հայաստան և Արմինե Էլոյանների կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 7-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 5 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շինության՝ կիսանկուղով բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կիսանկուղով բնակելի տունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 7-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 5 հասցեի օրինական հողամասին կից 250,0 քառ.մ հողամասի չափով ճանաչել Խաչատուր, Սերգեյ, Հայաստան և Արմինե Էլոյանների սեփականության իրավունքը:

2. Սույն որոշման 1-ին կետով նշված 250,0 քառ.մ հողամասից ավել օգտագործվող 186,0 քառ.մ մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի կարգով օտարել Խաչատուր, Սերգեյ, Հայաստան և Արմինե Էլոյաններին՝ կադաստրային արժեքի 30%-ի չափով, որը կազմում է 29 463 (քսանինը հազար չորս հարյուր վաթսուներեք) դրամ:

3. Խաչատուր, Սերգեյ, Հայաստան և Արմինե Էլոյաններին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 7-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 5 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված կիսանկուղով բնակելի տունը՝ 259,78 քառ.մետր արտաքին մակերեսով, համարել օրինական:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105214218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 223 411 (երկու հարյուր քսաներեք հազար չորս հարյուր տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 11

գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հուլիսի 2019 թվականի N 423-Ա

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 68-Ն որոշման 2-րդ կետը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ 08.2.4 խումբ ենթախմբի 4639 հոդվածը պակասեցնել 700.0 հազար դրամով, 05.2.1 խումբ ենթախմբի 5112 հոդվածը պակասեցնել 670.0 հազար դրամով և 09.2.2 խումբ ենթախմբի 4655 հոդվածն ավելացնել 700.0 հազար դրամով, 06.3.1 խումբ ենթախմբի 5129 հոդվածն ավելացնել 670.0 հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 11
գ. Ջրվեժ